Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ավտոբուսներով ուղևորների և ուղեբեռների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային/միկրոավտոբուսային երթուղիների համար՝

Հ/Հ	Երթուղու				Անհրաժեշտ ավտոբուսների թիվը	
	անվանումը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան)	տեսակը	փաստացի	պահուս-տային
դեպի Վրաստան						
1	Երևան-Բավրա-Ախալքալակի	Երևանի <<Հյուսիսային>> ԱԿ	Ախալքալակիի ԱԿ	Միկրոավ-տոբուս	3	1
2	Երևան-Բավրա-Բաթումի	Երևանի <<Հյուսիսային>> ԱԿ	Բաթումիի ԱԿ	Միկրոավ-տոբուս	2	1
3	Երևան-Բագրատաշեն-Քոբուլեթի	Երևանի <<Հյուսիսային>> ԱԿ	Քոբուլեթիի ԱԿ	Միկրոավ-տոբուս	2	1
Դեպի Ռուսաստանի Դաշնություն						
1	Երևան-Վոլգոգրադ-Սարատով-Սամարա-Ուֆա	Երևանի <<Հյուսիսային>> ԱԿ	Ուֆաի ԱԿ	Ավ-տոբուս	2	1

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1) Հայտ.
2) ավտոբուսների հաշվառման վկայագրեր.
3) ավտոբուսներին ամրակցված վարորդների վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային պայմանագրեր կամ քաղվածք հրամանից, աշխատանքային գրքույկներ.
4) ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
5) սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ անվտանգության պահանջներին ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման համապատասխանության վկայագրման վկայական և ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված բալոնների վկայագրման և գազավառելիքային սնման համակարգի ճնշափորձարկման վկայական.
6) փակ ծրարով ներկայացվող՝ երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի փոխադրման գինը.
7) տեղեկանք տարածքային հարկային մարմնից:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը-***2020 թվականի ապրիլի 10-ին ժամը 11^{00}-ին, ք. Երևան, Հյուսիսային ավտոկայարան:***

Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը՝
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10^{00}-ից մինչև 17^{00}-ն, մինչև 2020 թվականի ապրիլի 6-ը:

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար-011-527844: